ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱՀԱՅՐ Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄՅԱՆ՝ ՃԳՆԱԿՅԱՑ ՎԱՆԱԿԱՆ-ԳԻՏՆԱԿԱՆԸ

(1939-1996)

Մեծն Ավետիք Իսահակյանը 1930-ական թթ. Մխիթարյան միաբանության Վենետիկի ճյուղի մասին շատ դիպուկ նկատել է. 230-ամյա պատմության ընթացքում միաբանությունն ունեցել է շուրջ 300 անդամ, որոնցից միայն 30-50-ն են առավել նշանակալի հետք թողել մեր գիտության, կրթության ու մշակույթի ասպարեզներում. նույն ասպարեզների գործիչ-անհատականություններ միաբանությունը միաժամանակ միշտ ունեցել է 2-3 հոգուց ո՛չ ավելի և խոսքն ավարտում է նրանով, որ այդ օրերին ևս միաբանության վենետիկյան ճյուղն ունի գործող երկու ցայտուն անհատականություն՝ Հ. Վարդան Հացունի և Հ. Արսեն Ղազիկյան: Վերջինիս հոբելյանն էր այդ օրերին և որին էլ նվիրված էր բանաստեղծի գնահատանքի խոսքը:

Նրա նկատած օրինաչափությունը գործում է նաև մեր ժամանակներում. կրկին 2-3 մարդ, որոնց ամեն նոր հրապարակումը նշանակալի իրադարձություն է հայագիտության համար: Եվ, որ ամենացավալին է, այս շարադրանքը նրանցից ամենաերիտասարդին՝ Հայր Սահակ վարդապետ Ճեմճեմյանին վերաբերող հիշատակի խոսք է: Անառարկելի ճշմարտություն է, որ ցանկացած երևույթի կամ անհատի վերջնական ու ճշգրիտ գնահատականը տալիս է ժամանակը. բայց նույնչափ էլ անկասկած է, որ երբեմն անհատի գործի արժեքն աներկբայելի է լինում հենց հեղինակի կենդանության օրոք: Այսպես է նաև Հ. Սահակի պարագան. մեկը մյուսից կարևոր, արժեքավոր ու սպասված նրա աշխատությունները հերթով լուծում էին մեր պատմության ու բանասիրության էական շատ խնդիրներ:

Ծով նյութի տեղյակ՝ փաստասեր գիտնականն ամենայն սիրով բավարարում էր հայաստանցի շատ հայագետների հարցասիրությունը. շատ արժեքավոր նամակագրություն ուներ արժանահիշատակ և հանրահայտ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի հետ (միշտ և անվերապահ հարգանքով էր հիշում նրան). մեծանուն Հակոբ Անասյանի դիվանի մեջ ևս շատ են «Հ. Սահակ» ստորագրությունն ունեցող՝ գիտական մեծ արժեք ունեցող նամակները: Նրա հետ մեր բարեկամությունը նույնպես սկսվել է նամակագրությամբ. ունեցածս բոլոր գրությունները ճառագում են անսահման բարությամբ ու պատրաստակամությամբ:

Երբ 1996 թ. հունիսի 23-ին ստացանք նրա՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր ընտրվելու լուրը, ուրախության հետ ունեցանք նաև մտավախությունը՝ թե վարչական աշխատանքը կարող է գիտությանը ժամանակ չթողնել: Ո՞ւմ մտքով կանցներ, որ դարանակալ հիվանդությունը հազիվ երեքուկես ամսվա կյանք է թողել տիպար հոգևորականին և բազմարդյուն գիտնականին:

Հ. Սահակ Մեմճեմյանը (ավազանի անունով՝ Կարապետ) ծնվել է 1939 թ. մարտի 5-ին, Հալեպում. նախնական ուսումն ստացել է Դամասկոսում, 1952 թ. մեկնել Վենետիկ և ուսումնառությունը շարունակել Մխիթարյան միաբանության Ժառանգավորաց վարժարանում, ապա՝ Հռոմի Հիսուսյան միաբանության միջազգային Գրիգորյան համալսարանում: Կուսակրոն աբեղա է ձեռնադրվել 1964 թ. մարտի 29-ին, 1991 թ. ծայրագույն վարդապետի գավազան ստացել Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Հ. Գեորգ վ. Պալյանից: Կարևոր և պատասխանատու պաշտոններ է վարել հիմնականում Մխիթարյան մայրավանքում Ս. Ղազարում, երկար տարիներ վարել է միաբանության փոքր (Ս. Ղազար), ապա՝ մեծ (Հռոմ) ժառանգավորների խնամատարությունը, 1985-1990 թթ. «Բազմավէպ»-ի խմբագիրն էր, 1991-1996 թթ.՝ Մխիթարյան միաբանության ընդհանուր աթոռակալը (աբբահոր տեղապահը):

Շատ ուշագրավ է թե՛ հոգևորական և թե՛ գիտնական դառնալու նրա ճանապարհը. բազմանդամ ընտանիքի արհեստավոր հայրն ընթերցասեր որդու կրթության վարձ վճարել չէր կարող, ուղարկեց Ս. Ղազարի ժառանգավորաց վարժարան. Մխիթարյան առինքնող միջավայրն առմիշտ գրավեց պատանուն, և նա մի քանի տարի հետո հորը գրեց. «Այստեղ շատ-շատ ձեռագրեր և գրքեր կան, բոլորը պետք է կարդամ»: Եվ սկսեց կարդալ. սկզբում նրան հետաքրքրում էր ազգային ծիսագիտությունը. նախ ուսումնասիրեց և հրատարակեց Մաշտոց ժողովածուի «Մկրտութիւն» կանոնի քննական բնագիրը, հետագայում իր աշակերտներին հանձնարարում էր նույն ժողովածուի «Նշանտուքի», «Պսակի» և այլ կանոններ. մտադիր էր հրատարակելու Շարակնոցի նախաշնորհալիական բնագիրը և մինչև վերջ հետամուտ էր այս նպատակին:

Սակայն իր վանքը, միաբանությունն ու նրա առօրյա անելիքը համարում էր իր հոգսը. ականատես ենք՝ արդեն հսկա վաստակի տեր գիտնականն ամեն օր՝ ժամը 3-ին, ձեռքերն ազուցած, վանքի մուտքի մոտ դիմավորում էր այցելուների խմբերին, երկուսուկես ժամ համբերությամբ պտտեցնում վանքում և անձանձրույթ բացատրում բառացիորեն ամեն ինչ՝ «Հատակի այս խճանկարը Մխիթար աբբահայրն իր ձեռքով է պատրաստել, իսկ այս մեկը՝ աշակերտների հետ»: Այս մտահոգությամբ էլ տքնաջան ու երկարատև աշխատանքով՝ բոլոր թերթիկները մեկիկ-մեկիկ կարդալով, խնամելով ու կարգավորելով, մշակեց և քարտագրեց վանքի երեքդարյա՝ անխնամ մնացած դիվանը: Սրա շնորհիվ կարողացավ շարունակել և մեծաղիր մի քանի մատյանի տեսքով մեր օրերին հասցնել վանքի «Ժամանակագրութիւնը», որ սկսել և 1800 թվական էր հասցրել Հ. Մկրտիչ Ավգերյանը:

Տքնանքով ստացած նույն գիտելիքների ու իմացությունների ուժով գրեց իր մեծարժեք աշխատությունների մեծ մասը. «Հայր Ներսէս Սարգիսեանի ուղեւորութիւնը դէպի Փոքր եւ Մեծ Հայք (1843-1853)», Վենետիկ, 1974. «Աբրա-

համ Երեւանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի», Վենետիկ, 1977 (ուսումնասիրություն, հեղինակային և խմբագիր բնագրերի հրատարակություն). «Հ. Ղեւոնդ Ալիշան տեսուչ Փարիզի Մուրատեան վարժարանի (1858-1861)», Վենետիկ, 1980. «Մխիթար աբբահօր հրատարակչական առաքելութիւնը», Վենետիկ, 1980 (կոթողային ամփոփ ուսումնասիրություն). «Քարտիսագիտութեան դպրոց մը Ս. Ղազարի մէջ ԺԸ դարուն», Վենետիկ, 1981. «Հ. Միքայէլ Չամչեան եւ իր Հայոց պատմութիւնը», Վենետիկ, 1983. «Գէորգ դպիր Տէր-Ցովհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները», Վենետիկ, 1984. «Նոր նիւթեր Սարգիս արքեպս. Սարաֆեանի մասին», Վենետիկ, 1985. «Ցովհաննէս Պատկերահան (1695-1758)», Վենետիկ, 1987. «Ցովհաննէս Պատկերահան. Նամականի (1695-1758)», Վենետիկ, 1988 և այլն:

Հիմնականում մայրավանքում պաշտոնավարած լինելով հանդերձ, չորս տարի «հայրություն» էր անում Հռոմում համալսարանական կրթություն ստացող ծառանգավորներին. առօրյա կազմկերպական հոգսերից ազատ բոլոր վայրկյաններն անց էր կացնում Հավատասփյուռի (Պրոպագանդա) դիվանում. մեկ առ մեկ նայել է դիվանական հարյուրավոր ծավալուն հատորներ, քարտագրել ու քաղագրել բազմաթիվ հարցերի պատասխանող ու խնդիրներ լուծող փաստաթղթեր: Առիթ ենք ունեցել թերթելու չորսամյա աշխատանքի այդ հսկա արդյունքը և համոզվելու, որ տասնյակ ուսումնասիրությունների նյութ էր ամբարել, ուստի և ցավով արձանագրում ենք, որ հասցրեց տպագրել միայն երկու փաստաթղթից գործ. «Մարսիլիոյ հայ տպարանը», Վենետիկ, 1987. «Հայ տպագրութիւնը և Հռոմ (ԺԷ դար)», Վենետիկ, 1989:

Հ. Սահակի խմբագրման տարիներին (1985-1990) 150-ամյա «Բազմավէպ»-ը ամենալուրջ գիտական նկարագիր ստացավ (անգամ՝ ոմանք դժգոհում էին, թե գրական նյութեր չունի). այս տարիներին բացառապես իր աշխատանքի ու ջանքերի շնորհիվ ավարտուն տեսքի բերվեցին և հրատարակվեցին Կարապետ եպս. Ամատունու թերի մնացած որոշ գործերը. «ԺԷ դարու երկեղի վարդապետներ», Վենետիկ, 1989. «Մովսէս Գ Տաթեւացի կաթողիկոս Էջմիածնի», Վենետիկ, 1992: Մեր օրերի իրադարձություններին արձագանքեց անմիջապես՝ Ղ. Ալիշանի «Հայաստանի տեղագրութիւն»-ը տպագրել սկսելով «Արցախ» և «Ուտիք» մասերից:

Ուներ նաև խորունկ, աներկբա և անայլայլ հավատ, որի թելադրանքով էլ հրատարակել է տասնյակ գրքեր՝. «Ճանչնալ Քրիստոսը աղօթքի կեանքով» (1995), «Աւետարանական երանութիւններ» (1996) և այլն:

Կարևորությունը գիտակցելով, վերջին տարիներին անմնացորդ նվիրվել էր միաբանության ձեռագրական ընտիր հավաքածուի ցուցակագրման ծանր աշխատանքին, որով և կերտեց իր կյանքի հուշարձանը. 1993-1996 թթ. տպագրեց «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ» կոթողային հրատարակության Դ-Զ հատորները՝ 2054 մեծադիր էջ, որոնք ընդգրկում են շուրջ 750 ձեռագրի նկարագրություն. նաև ավարտել է Է հատորը (170 ձեռագիր), պատրաստել՝ Ը հատորի կեսը, մտադիր էր ամբողջ հավաքածուի (շուրջ 3500 ձեռագիր) պարունակությունը հայագիտության սեփականությունը դարձնելու՝ նկարագրությունը Թ հատորով ավարտելով:

Պակաս կարևոր չէ նաև այն, որ իր հատորների սկզբում տպագրեց հավաքածուի ստեղծման պատմությունը՝ քայլ առ քայլ, անհատ առ անհատ ներկայացնելով այն ջանքերը, որով միաբանությունը հետևողաբար ժողովել է իր

ձեռագրական ընտրելագույն հավաքածուն (հաճախ՝ անվերապահ կորստից փրկելով իսկապես անփոխարինելի արժեքներ)։ Այս շարադրանքի մեջ աչքի է զարնում իր «ընտանիքի»՝ միաբանության նկատմամբ ունեցած սերն ու անվերապահ նվիրումը. երկու–երեք դար առաջ կատարվածի մասին կարող է գրել. «մենք ձեռագիրն ստացած ենք», «մերինները բերած են», «նուիրած են մեզի» և այլն. ակնհայտ է իր նախորդների հետ ունեցած կենդանի հոգեկան կապը՝ Մխիթարի և Մխիթարյան ոգին։

Ձեռագրացուցակի մեր գրախոսության մեջ (Պատմա-բանասիրական հանդես, 1995, Հմր 2, էջ 245–53) անկեղծորեն գրել էինք. «Եթե միաբանությունն ի վիճակի լիներ իր այս մի անդամին ընծայելու միայն գիտությանը (ինչպես ժամանակին՝ Ալիշանին), ապա նա կուտակած պաշար շատ ունի, հայագիտությանն էլ՝ բազմաթիվ տալիքներ», ապա՝ ավարտել էինք «Վարձքդ կատա՛ր» սրտաբուխ խոսքով։ Այժմ էլ համոզված ենք, որ պատրաստի հատորը շուտափույթ տպագրելը պետք է լինի միաբանության սուրբ պարտականությունը, իսկ կիսատ մնացածը և չարվածը, նույնպես՝ հնարավոր չափով արագ, պետք է ավարտի և հրատարակի Հայր Սահակի շնորհալի աշակերտներից մեկը. միայն սրանով կարելի է կատարել իսկապես ճգնակյաց բազմարդյուն հոգևորական-գիտնականի՝ մեզ հայտնի վերջին ցանկությունը՝ «ինչ ալ ընելու ըլլան, Է. Ը. Թ հատորները լոյս պիտի տեսնին, ամէն տարի հատ մը»։

Սրտի ցավով և դժվարությամբ գրված այս խոսքն ավարտում ենք հիշատակարանային մաղթանքով. «Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։